

ՎԱՆԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվել է իրավաբանական պատասխանատվության դասակարգման չափորոշիչների հիմնախնդիրը իրավունքի տեսության մեջ:

Հիմնարարներ- իրավունքի տեսություն, իրավաբանական պատասխանատվություն, իրավախախտում, դասակարգում:

Իրավաբանական պատասխանատվության դասակարգման հիմնախնդիրը իրավունքի տեսության բարդ և դեռևս չլուծված խնդիրներից է: Իրավաբանական պատասխանատվությունը, որպես համակարգ, բաղկացած է ենթահամակարգերից, որոնք հանդիսանում են իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակներ: Իրավաբանական պատասխանատվության մեջ ենթահամակարգերի թիվը հավասար է իրավաբանական պատասխանատվության տեսակների թվին: Իր հերթին, իրավաբանական պատասխանատվության յուրաքանչյուր տեսակ բնութագրվում է իր ենթատեսակներով (ենթահամակարգերով), իսկ իրավական պատասխանատվության ենթատեսակները կազմված են իրավաբանական պատասխանատվության նորմերի համախմբից: Նման համակարգում առաջնային տարր հանդիսանում է կարգադրագրերի պահպանման և խախտման համար պատասխանատվություն նախատեսող կոնկրետ իրավական նորմը: Իրավական նորմը հանդիսանում է ամբողջ իրավական համակարգի ընդհանուր տարր՝ այլ մակարդակի համակարգի շրջանակներում հանդես գալով տարրերի յուրօրինակ կապի որակով: Այսպիսով, իրավաբանական պատասխանատվության համակարգը կարելի է պայմանական արտահայտել ըստ հետևյալ սխեմայի. ընդհանրապես իրավաբանական պատասխանատվություն (որպես համակարգ)-իրավաբանական պատասխանատվության տեսակներ (որպես ենթահամակարգեր)-իրավաբանական պատասխանատվության ենթատեսակներ (որպես համակարգի տարրեր)- իրավաբանական պատասխանատվություն նախատեսող նորմ (որպես առաջնային տարր):

Իրավաբանական պատասխանատվության համակարգում տարբերում են պատասխանատվության չորս մակարդակներ.

առաջին՝ պատասխանատվության բոլոր տեսակների համախումբ՝ ընդհանրապես իրավական պատասխանատվություն,

երկրորդ՝ իրավունքի ոլորտի մակարդակում պատասխանատվություն,

երրորդ՝ իրավական ինստիտուտի մակարդակում պատասխանատվություն,

չորրորդ՝ իրավունքի նորմի մակարդակում պատասխանատվություն:

Դիտարկելով իրավաբանական պատասխանատվության համակարգը՝ անհրաժեշտ է նկատի ունենալ այդ համակարգի տարբեր մակարդակները: Այսպես, մի մակարդակում նշում ենք իրավաբանական պատասխանատվության տեսակը որպես դրա ենթահամակարգ, իսկ մյուսում՝ որպես ինքնուրույն համակարգ: Իրավաբանական պատասխանատվության յուրաքանչյուր տեսակ հանդես է գալիս ինքնուրույն համակարգի որակով (իրավունքի ճյուղի մակարդակում): Դրա բաղադրիչներ՝ իրավաբանական պատասխանատվության ենթատեսակներ, որոնք ամրագրում են պատասխանատվությունը հասարակական հարաբերությունների որակական միատարր ոլորտներում, այսինքն՝ իրավունքի ոլորտի շրջանակներում:

Օրինակ, վարչական պատասխանատվության շրջանակներում կարելի է առանձնացնել այնպիսի տարատեսակներ, ինչպես էկոլոգիական և մաքսային պատասխանատվությունները, որոնք ամրագրում են պատասխանատվությունը հասարակական հարաբերությունների միատարր ճյուղերում: Անհրաժեշտ է ընդգծել, որ էկոլոգիական և մաքսային պատասխանատվությունները իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակներ չեն, այլ վարչականի տարատեսակներ:

Իրավաբանական պատասխանատվության համակարգը իրավունքի ինստիտուտների և նորմերի համախումբ և փոխգործունեություն է. վերջին-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներիս պահպանումը ապահովում է իրավակարգը, իսկ իրավախախտման դեպքում դրանց կիրառությունը, հակառակը, վերականգնում է իրավակարգը: Իրավաբանական պատասխանատվության համակարգային միասնությունը ապահովվում է իրավական կարգավորման առարկայով և մեթոդով, իրավաբանական պատասխանատվության միասնական սկզբունքով:

Բացի դրանից, իրավական պատասխանատվության համակարգվածությունը պայմանավորված է միասնական գործառույթներով, միատարր հասարակական հարաբերությունների վրա իրավաբանական պատասխանատվության բոլոր ձևերով նպատակաուղղված ազդեցությամբ:

Օրինակ, սեփականության հարաբերությունների դիմամիկան ձևավորվում է ինչպես քաղաքացիական-իրավական և քրեական, այնպես նաև իրավաբանական պատասխանատվության այլ ձևերի նորմերի ազդեցությամբ: Սահմանադրական կարգի անսասանությունը ապահովվում է ինչպես քրեական, այնպես նաև սահմանադրական պատասխանատվությամբ: Իրավաբանական պատասխանատվության անխախտության հատկանիշ հանդես է գալիս իրավախախտում կատարելու դեպքում սուբյեկտին իրավաբանական պատասխանատվության մի քանի տեսակների ենթարկելու հնարավորությունը: Իրավաբանական պատասխանատվության մեկ տեսակի մյուսով առկա փոխլրացումը, նպաստելով ընդհանուր գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը, հանդիսանում է համակարգաձևավորող հատկանիշ, ակտիվություն, որը ամբողջական համակարգի ձևով միավորում է իրավաբանական պատասխանատվության տարատեսակ միջոցները³:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք կարծիքի, ըստ որի՝ մեկ իրավախախտման համար հնարավոր է իրավաբանական պատասխանատվության մի քանի տեսակների ենթարկում: Մեր կարծիքով, այստեղ հարաբերակցությունը փոքր-ինչ այլ է: Մեկ իրավախախտ արարք (մեկ գործողություն) կարող է միանգամից խախտել իրավունքի մի քանի ճյուղերի նորմեր, հետևաբար, առկա է իրավախախտումների բազմություն, որն էլ պայմանավորում է իրավաբանական պատասխանատվության մի քանի տեսակի ենթարկումը: Քրեական իրավունքի մեջ նման երևույթը (երբ մեկ արարքով միանգամից խախտվում է մի քանի քրեական-իրավական արգելք) ստացել է «փղեալական համախումբ» անվանումը. այն բավարար ուսումնասիրվել է քրեական-իրավական գրականության մեջ⁴: Այս խնդիրը արդիական է նաև իրավունքի տեսության համար: Հատկապես իրավախախտ-

ման համախմբի ոլորտում իրավակիրառողի համար, դասակարգման հետ կապված, ծագում են առավելագույն խնդիրները: Օրինակ, երբ միաժամանակ հնարավոր է ենթարկել ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական-իրավական պատասխանատվության, երբ կարգապահական պատասխանատվությունը կարող է բացառել վարչականը և այլն:

Իրավաբանական պատասխանատվության մեկ տեսակի կանոնակարգում փոփոխությունները անխուսափելիորեն հանգեցնում են փոփոխությունների իրավաբանական պատասխանատվության այլ տեսակում, հատկապես, եթե նշված տեսակները կարգավորում են միատարր հասարակական հարաբերություններ:

Իրավաբանական պատասխանատվության՝ որպես ազգային իրավունքի ենթահամակարգի դասակարգումը անհրաժեշտ է իրականացնել դրա համակարգի, իրավաբանական պատասխանատվության տեսակի, իրավաբանական պատասխանատվության ենթատեսակի և իրավական պատասխանատվության իրավական նորմի մակարդակում: Իրավունքի տեսության մեջ, բացի իրավունքի ճյուղային չափորոշիչից, առանձնացնում են իրավաբանական պատասխանատվության դասակարգման տարբեր չափորոշիչներ՝ գործառույթային, նպատակային, սուբյեկտային՝ կախված հարկադրման բնույթից և կիրառվող միջոցների տեսակներից, իրավախախտման տեսակից, այն կիրառող սուբյեկտներից: Իրավաբանական պատասխանատվության դասակարգման չափորոշիչները պահանջում են մանրակրկիտ վերլուծություն և իրավաբանական պատասխանատվության ենթահամակարգերի ու տարրերի առանձնացման համար իրենց ընդունելիության սահմանում:

Որոշ գիտնականներ համաձայն չեն այն դիրքորոշմանը, որ իրավաբանական պատասխանատվության ճյուղային պատկանելիությունը հանդիսանում է դասակարգման անհրաժեշտ չափորոշիչ: Այսպես, Օ. Է. Լեյստը գրում է. «Առաջնային խնդիր է պատասխանատվության տեսակների տիպականացումը, դրանց՝ խոշոր դասակարգման ենթարկելը»: Դրան համապատասխան՝ նա առանձնացնում է իրավավերականգնում և պատժիչ պատասխանատվություն: Եթե հետևենք հեղինակի տերմինաբանությանը, «իրավավերականգնումը և պատժիչ պատասխանատվությունը» պատասխանատվության տեսակներ են, սակայն Օ.Է. Լեյստը այլ աշխատանքներում փոխել է իր դիրքորոշումը և պնդել իրավական պատասխանատվության իրավավերականգնող և պատժիչ տեսակների վերաբերյալ: Նա գրում է. «Իրավաբանական պատասխանատվության հիմնական տեսակները կանխո-

րոշվում են իրավախախտման համար կիրառվող սանկցիաների բովանդակությամբ»:

Սանկցիան իրավակարգին ծառայության եղանակին համապատասխան բաժանվում է երկու հիմնական տեսակի. իրավավերականգնող սանկցիաները ուղղված են իրավակարգին պատճառված անմիջական վնասի չեզոքացմանը ... տույժային, պատժիչ սանկցիաների խնդիրը ընդհանուր և մասնավոր կանխման նպատակներով իրավախախտի վրա ազդեցությունն է: Քանի որ սանկցիայում արտահայտված իրավակարգի պահպանության եղանակը կանխորոշում է դրա կիրառության և իրականացման կարգը, պատասխանատվության (ինչպես նաև սանկցիաների) բաժանման հիմնական տեսակը հանդիսանում է տուգանային և իրավավերականգնողի բաժանումը⁶: Նման բաժանման հիմքում տեղակայված է ոչ թե սանկցիաների բովանդակային բնույթը, այլ դրանց գործառության չափորոշիչները, այսինքն՝ այն գործառույթները, որոնք իրականացնում է իրավաբանական պատասխանատվությունը: Օրինակ, Վ.Ա. Կիսլուխինը պնդում է, որ գործառության չափորոշիչը տեղադրված է իրավավերականգնող և պատժիչ պատասխանատվության դասակարգման հիմքում⁷: Քանի որ իրավական պատասխանատվությունն ունի ոչ միայն վերականգնող և պատժիչ գործառույթներ, այլ նաև կանխարգելիչ, դաստիարակչական (իսկ դա որևէ մեկի կողմից չի ժխտվում), ըստ տրամաբանության անհրաժեշտ է խոսել իրավաբանական պատասխանատվության դաստիարակչական և կանխարգելիչ տեսակների մասին: Հնարավոր է, հասկանալով այս հանգամանքը, Վ.Ա. Կիսլուխինը նշում է, որ «ըստ իրավական պատասխանատվության տեսակների և դրանց թվի վերաբերյալ հարցի՝ հեղինակները հիմնականում առանձնացնում են իրավավերականգնող (ռեպարացիոն) և ռեպրեսիվ (պատժիչ) երկու հիմնական գործառույթներ»⁸: Առաջին. գիտնականների մեծամասնությունը վերականգնողին և պատժիչին զուգահեռ առանձնացնում են դաստիարակչական և կանխարգելիչ գործառույթները: Երկրորդ. գործառույթների դասակարգման մեջ չեն առանձնացնում իրավական պատասխանատվության գլխավոր (հիմնական) և ոչ գլխավոր (լրացուցիչ) գործառույթները, այսինքն՝ որպես գործառույթ կարող է ընդունվել միայն իրավական ազդեցության հիմնական ուղղությունը:

Իրավաբանական պատասխանատվության բազմագործառույթ լինելու արդյունքում (իսկ վերջինս, ըստ հեղինակի, իրականացնում է կարգավորիչ, կանխարգելիչ, վերականգնող, պատժիչ և դաստիարակող գործառույթներ) դրա գործառության չափորոշիչը չի կարող տեղակայվել իրավա-

բանական պատասխանատվության դասակարգման հիմքում: Թվում է՝ պատասխանատվության տեսակներից պատժիչը քրեականը պետք է իրականացնի միայն որպես պատժիչ գործառույթ, սակայն ոչ միայն իրավունքի ընդհանուր տեսության, այլ նաև քրեական իրավունքի գիտության մեջ առավել մեծ հավանություն է ստանում քրեական պատասխանատվության և՛ պատժիչ, և՛ կարգավորիչ, և՛ վերականգնողական գործառույթների իրականացման գաղափարը: Քրեական պատասխանատվության կարգավորիչ-ստատիկ գործառույթը արտահայտվում է քրեական պատասխանատվության սուբյեկտների որոշակի գործողությունների իրականացման կամ դրանցից ձեռնպահ մնալու պարտականության, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանության, խիստ անհրաժեշտության իրավունքների կոմպլեքսի ամրագրման մեջ, հետևաբար, վերջինս մասնակցում է սուբյեկտի քրեաիրավական կարգավիճակի սահմանման մեջ: Եթե սուբյեկտը խախտում է քրեաիրավական նորմը, նրա մոտ ծագում են հանցագործության կատարման փաստից բխող, իսկ իրավակիրառողի մոտ՝ խախտողին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավունքներ և պարտականություններ: Այս պարտականությունները և իրավասությունները սահմանում են իրավակիրառողի գործունեությունը, այսինքն՝ կարգավորում են հանցագործություն կատարած անձի և պետության (ի դեմս լիազոր մարմինների) միջև ձևավորվող հասարակական հարաբերությունները: Անհրաժեշտ պաշտպանության իրավունքը իրականացնող սուբյեկտը, հանցագործություն կատարած անձի կալանավորումը վնաս չի հասցնում հասարակական հարաբերություններին, իսկ տվյալ իրավունքները ամրագրող նորմերը բազմագործառության են. դրանք և՛ կանխարգելում, և՛ կարգավորում են: Յանկացած իրավախախտում վնաս է հասցնում հասարակական հարաբերություններին, իսկ նյութական, բարոյական կամ ֆիզիկական վնասները հասարակական վտանգավոր հանցագործության միայն արտաքին արտահայտումներն են: Քրեական օրենքում ամրագրված սոցիալական արդարության վերականգնման նպատակը մարդկային քաղաքակրթության զարգացման օրինաչափ արդյունքն է. վերջինս անցել է դրա՝ որպես քրեական պատժի կիրառությունից դրա՝ որպես սոցիալական արդարության, վերականգնման միջոցներից մեկի ուղին: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է վերջինիս որոշակի ոլորտից սուբյեկտի բացառման, անձին վարքագծային որոշակի տեսակին հարկադրման, պետության և տուժողների կրած կորուստների փոխհատուցման ուղիով: Անձի արդարացի դատապարտումը քաղա-

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քացիների գիտակցության մեջ նշանակում է արդարության, քրեաիրավական նորմի հաղթանակ: Դատապարտման ժամանակ հիմնականում տեղի է ունենում ընդհանուր սոցիալական արդարության վերականգնում, իրավունքով անմիջականորեն չկարգավորվող երևույթների և գործընթացների վերականգնում:

Երկրորդ. թվում է պատասխանատվության «վերականգնողներից վերականգնողը»՝ քաղաքացիական-իրավականը, պետք է իրականացնի միայն վերականգնող գործառույթ, սակայն քաղաքացիական իրավունքի գիտության մեջ երկարատև քննարկումների արդյունքում հանգել են քաղաքացիական-իրավական պատասխանատվության բազմագործառույթյան վերաբերյալ եզրակացության՝ նշելով, որ այն վերականգնմանը զուգահեռ իրականացնում է նաև հատուցման գործառույթ: Պատասխանատվությունը օժտված է հատուցման գործառույթի առկայության վերաբերյալ վկայող բոլոր գծերով և բնութագրիչներով: Քաղաքացիական-իրավական խախտողին պատասխանատվության ենթարկման վերաբերյալ որոշման մեջ պարունակվում է դրա դատապարտումը: Դատապարտման մեջ միշտ առկա է հատուցման տարր: Այն բացասաբար է ազդում իրավախախտողի հոգեբանության վրա, նրան պատճառում բարոյական տառապանք և միաժամանակ հանդիսանում հիմք վերջինիս գույքային ոլորտի բռնագրավման համար: Եթե քաղաքացիական-իրավական պատասխանատվության միջոցները կրում են վերականգնող բնույթ, ապա իրավախախտի համար անխուսափելի է վնասի պատճառումը: Քաղաքացիական-իրավական պատասխանատվության ազդեցության մեխանիզմը համակցում է հանրային-իրավական և մասնավոր-իրավական շահեր: Սուբյեկտի մասնավոր-իրավական շահերը, առավել քան հանրայինը, կարող է ամփոփվել միայն վերջինիս նյութական վնասի վերականգնման մեջ: Հանրային-իրավական շահերը իրենց մեջ ընդգրկում են ոչ միայն տուժողի նյութական ոլորտի, այլ նաև օրինականության, իրավակարգի, բարոյահոգեբանական հանգստության, սոցիալական արդարու-

թյան, պետական իշխանության հեղինակության, խախտված իրավունքի վերականգնման գործառույթները:

Իրավաբանական պատասխանատվության իրավավերականգնողի և պատժիչի դասակարգումը իմաստ կունենար հստակ սահմանազատման դեպքում, թե իրավական պատասխանատվության ինչ տեսակներն են դասվում պատժիչի, իսկ որոնք՝ վերականգնողի շարքին. սակայն նույնիսկ այս դասակարգման հետևորդների աշխատանքներում նման սահմանազատումը բացակայում է: Վ.Ա. Կիսլովիսինը նշում է սահմանադրական, քրեական, ֆինանսական, վարչական, ընթացակարգային պատասխանատվության պատժիչ բնույթը: Սիևնույն ժամանակ հետևյալ մեջբերման մեջ նա գրում է. «...սահմանադրական, քրեական, վարչական, ֆինանսական, հարկային, ընթացակարգային և իրավունքի այլ ոլորտներում իրավական պատժիչ պատասխանատվությանը զուգահեռ կիրառվում է իրավական վերականգնող պատասխանատվությունը»: Ստացվում է, որ քրեական իրավունքի մեջ առանձին գոյություն ունեն պատժիչ և վերականգնող պատասխանատվություններ, իսկ պատժիչ պատասխանատվության իրականացումը, հնարավոր է, գատված է վերականգնող պատասխանատվության իրականացումից: Դա հակասում է ինչպես իրերի տրամաբանությանը, այնպես նաև գործող օրենսդրությանը: Պատասխանատվության ցանկացած միջոցի, պատասխանատվության ցանկացած տեսակի կիրառության գործընթացում իրականացվում են պատժիչ, վերականգնող, կանխարգելիչ և դաստիարակչական գործառույթները, ընդ որում, իրականացվում են միաժամանակ: Իրավունքի բոլոր ճյուղերում իրավական պատասխանատվության գործառույթները փոխգործակցում են միմյանց հետ:

¹ Մանրամասն տե՛ս Կիսլухին Վ.Ա. Виды юридической ответственности, дис. ... канд. юрид. наук. М., 2002.
² Տե՛ս Կիրկով Ա.Ս. Ответственность в системе законодательства. Автореферат дис. ... канд. юрид. наук. М., 1989, С. 11-12.
³ Տե՛ս Прокопович Г.А. Юридическая ответственность в Российском праве, теоретический аспект. дис. ... канд. юрид. наук. М, 2003, С. 171-172.
⁴ Տե՛ս Липинский Д.А., Хачатуров Р.Л., Шишкин А.Г. Меры юридической ответственности. М., 2014, С. 147-148.
⁵ Տե՛ս Лейст О. Э. Основные виды юридической ответственности за правонарушения //Правоведение. - 1997. N3. С. 8-9.
⁶ Նույն տեղում, էջ 11:
⁷ Տե՛ս Կիսլухին Վ. А. Виды юридической ответственности. Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002. С. 10.
⁸ Տե՛ս Կիսլухին Վ. А. Виды юридической ответственности. С. 11-12.
⁹ Տե՛ս Քաղաքացիական-իրավական պատասխանատվության մասին մանրամասն, տե՛ս Բարսեղյան Տ.Տ. Գույքային պատասխանատվության ինստիտուտի՝ էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևան, 2006թ., նույնի, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը (Տեսապատմական և գիտագործնական հետազոտություն): Ատենախոսություն իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման: Երևան, 2006թ.:
¹⁰ Տե՛ս Կիսլухին Վ.А. Виды юридической ответственности. С. 21.

Ванине Овсепян

Соискатель института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Проблемы классификации юридической ответственности

В данной статье обстоятельно рассматриваются проблемные аспекты классификации юридической ответственности.

Ключевые слова: теория права, юридическая ответственность, правонарушение, классификация.

Vanine Hovsepyan

Applicant at the Philosophy, Sociology and Law Institute
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

The Problem of Classification of Legal Liability

The problem of classification criteria of legal liability in the theory of law is thoroughly discussed in the present article.

Keywords: theory of law, legal liability, offense, classification.